«Ս.Ա.Վ.Կ» ՍՊԸ «ՍԵՎԱՆ» Արտադրանքի սերտիֆիկացման մարմինն իր հայտատուներին առաջարկում է համակցված կերերի համապատասխանության սերտիֆիկացում՝ կամավոր կանոնակարգման ոլորտում, հիմնվելով հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում իրականացված հետևյալ փորձարկումների արդյունքների վրա.

- զգայորոշման, մանրէաբանական և ֆիզիկաքիմիական ցուցանիշների, ռադիոնուկլիդների, միկոտոքսինների, թունավոր տարրերի, պոլիքլորացված բիֆենիլների, պեստիցիդների որոշում:

Համապատասխանության սերտիֆիկատների գրանցման կարգը

«Ս.Ա.Վ.Կ» ՍՊԸ Արտադրանքի սերտիֆիկացման մարմնում արտադրանքների կամավոր սերտիֆիկացումը իրականացվում է աղյուսակում ներկայացված սխեմաներով՝

աղյուսակ

Սխեմայի նույնականացման նշագիրը	Սխեմայի բովանդակությունը և դրա կատարողը	Սերտիֆիկատի գործողության ժամկետը, ամիս ոչ ավելի
1ս	**Սույն սխեման կիրառվում է սերիական արտադրության համար** **Հավատարմագրված/նաև չհավատարմագրված/ փորձարկման լաբորատորիա** Փորձարկում է արտադրանքի տիպային նմուշը **Սերտիֆիկացման մարմին** Իրականացնում է արտադրության վիճակի վերլուծություն Հանձնում է հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ Իրականացնում է արտադրանքի համապատասխանության հսկողություն (արտադրողի մոտից ընտրված արտադրանքի նմուշների փորձարկում և արտադրության վիճակի վերլուծություն)	24
2ս	**Սույն սխեման կիրառվում է սերիական արտադրության համար** **Հավատարմագրված/նաև չհավատարմագրված/ լաբորատորիա** Փորձարկում է արտադրանքի տիպային նմուշը **Սերտիֆիկացման մարմին** Իրականացնում է արտադրության վիճակի վերլուծություն Հանձնում է հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ Իրականացնում է արտադրանքի համապատասխանության հսկողություն (շուկայից և արտադրողի մոտից ընտրված արտադրանքի նմուշների փորձարկում և արտադրության վիճակի վերլուծություն)	36
3ս	**Սույն սխեման կիրառվում է արտադրանքի խմբաքանակի համար** **Հավատարմագրված/նաև չհավատարմագրված/ լաբորատորիա**	12

	Փորձարկում է արտադրանքի տիպային նմուշը **Սերտիֆիկացման մարմին** Հանձնում է հայտատուին համապատասխանութ-յան սերտիֆիկատ	

«Ս.Ա.Վ.Կ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնում արտադրանքների կամավոր սերտիֆիկացումը իրականացվում է հետևյալ փուլերով՝

1.Հայտի ներկայացում սերտիֆիկացման մարմին

2.Սերտիֆիկացման մասին որոշման ընդունում

3.Սերտիֆիկացման համաձայնագրի կնքում

4. Սերտիֆիկացման աշխատանքներ իրականացնելու կարգադրություն և ծրագիր

5. Արտադրանքի նմուշառում և նույնականացում

6.Փորձարկումների կատարում

7.Արտադրության վիճակի վերլուծություն կամ որակի կառավարման համակարգի գնահատում:

8. Արտադրանքի համապատասխանության գնահատում

9. Համաձայնագրի նախապատրաստում

10. Որոշում սերտիֆիկատի հանձնման

11. Սերտիֆիկատի գրանցում և հանձնում

12.Սերտիֆիկատի գործողության կասեցում և դադարեցում

13. Սերտիֆիկացված արտադրանքի համապատասխանության հսկողություն

14.Սերտիֆիկատի մերժում